Նախագահ
Դիտեր Ֆ. Ուխդորֆ
Առաջին Նախագահության
Երկրորդ Խորհրդական



Կարո՞ղ ենք մենք տեսնել Քրիստոսին:

Մի օր երեկոյան պապիկը պատմություն էր կարդում իր չորս տարեկան թոռնուհու համար, երբ նա վեր նայեց ու ասաց. «Պապիկ, նայիր աստղերին»: Ծերունին մեղմորեն ժպտաց ու ասաց. «Մենք սենյակում ենք, քաղցրիկս: Այստեղ աստղեր չկան»: Սակայն երեխան պնդեց. «Դու աստղեր ունես քո սենյակում: Նայիր»:

Պապիկը վեր նայեց և, ի զարմանս իրեն, նկատեց, որ առաստաղը պատված է պսպղուն մետաղով: Այն մեծամասամբ անտեսանելի էր լինում, բայց երբ առաստաղը լուսավորվում էր որոշակի ձևով, այն իրոք նմանվում էր աստղազարդ երկնքի: Երեխայի աչքերն էին, որ տեսան դրանք, չնայած որ դրանք միշտ այնտեղ էին: Եվ այդ պահից սկսած, երբ պապիկը մտնում էր այդ սենյակը և նայում էր վեր, նա կարողանում էր տեսնել այն, ինչը մինչ այդ չէր տեսնում:

Մենք մուտք ենք գործում ևս մեկ հրաշալի Սուրբ Ծննդյան ժամանակաշրջան՝ լի երաժշտությամբ ու լույսերով, խնջույքներով ու նվերներով: Բայց բոլոր մարդկանցից զատ, մենք, որպես Փրկչի անունը կրող եկեղեցու անդամներ, պետք է նայենք ժամանակաշրջանի արտաքին տեսքից այն կողմ և տեսնենք վսեմ ճշմարտությունն ու զեղեցկությունը տարվա այս պահի:

Հետաքրքիր է, քանի՞սը Բեթլեհեմում գիտեին, որ հենց այնտեղ էր՝ իրենց մոտ, ծնվել Փրկիչը: Աստծո Որդին, երկար սպասված և խոստացված Մեսիան նրանց մեջ էր:

Դուք հիշու՞մ եք, թե ինչ ասաց հրեշտակը հովիվներին: «Այսօր ձեզ Փրկիչ ծնուեցավ Դաւիթի քաղաքումը. որ է Քրիստոս Տէրը»: Եվ նրանք իրար ասացին. «Եկէք գնանք մինչեւ Բեթլէհէմ, եւ տեսնենք այս եղած բանը» (Ղուկաս Բ.11, 15):

Հին ժամանակների հովիվների պես մենք պետք է ասենք մեր սրտերում. «Եկեք տեսնենք այս եղած բաները»: Մենք պետք է մեր սրտերում ունենանք այդ ցանկությունը: Եկեք տեսնենք Իսրայելի Սրբին մսուրում, տաճարում, լեռան վրա և խաչի վրա: Եկեք մենք էլ հովիվների պես փառաբանենք ու գովերգենք Աստծուն այս մեծ ուրախության ավետիսի համար:

Երբեմն ամենադժվարը այնպիսի բաները տեսնելն է, որոնք մշտապես հենց մեր առջևում են: Պապիկի նման, որը չէր տեսել առաստաղի աստղերը, մենք էլ երբեմն չենք կարողանում տեսնել այն, ինչը շատ պարզ է:

Մենք, որ լսել ենք Աստծո Որդու գալստյան փառահեղ ավետիսը, մենք, որ մեզ վրա ենք վերցրել Նրա անունը և ուխտել ենք քայլել Նրա

ճանապարհով՝ որպես Նրա հետևորդներ, մենք պետք է բացենք մեր սրտերն ու մտքերը և իրոք տեսնենք Նրան:

Սուրբ Ծննդյան ժամանակաշրջանը հրաշալի է բազում պատճառներով: Այն բարությամբ և եղբայրասիրությամբ բարեգործական արարքներ կատարելու ժամանակ է: Այն մեր կյանքին և մեր օրհնություններին ավելի շատ անդրադառնալու ժամանակ է: Այն ներելու և ներվելու ժամանակ է: Այն երաժշտությունն ու լույսերը, խնջույքներն ու նվերները վայելելու ժամանակ է:

Սակայն ժամանակաշրջանի փայլը չպիտի երբեք մշուշի մեր տեսողությունը և խանգարի մեզ իսկապես տեսնել Խաղաղության Իշխանին Իր ողջ վեհությամբ:

Եկեք մենք բոլորս այս տարի Սուրբ Ծնունդը դարձնենք ուրախության ու տոնախմբության ժամանակ, ժամանակ, երբ մենք երախտապարտ ենք այն հրաշքի համար, որ աշխարհը փրկելու համար Ամենակարող Աստված ուղարկեց Իր Միածին Որդուն՝Հիսուս Քրիստոսին:

Մտքեր այս ուղերձն ուսուցանելու համար

1. «Ուշադրություն գրավող վարժություններ կարող են օգտագործվել հետաքրքրություն առաջացնելու և դասի թեմայի վրա լսողների ուշադրությունը կենտրոնացնելու համար: . . . Նկարները արժեքավոր գործիքներ են դասի հիմնական նպատակը ընդգծելու համար և օգնելու սովորողներին կենտրոնացած մնալ» (*Teaching, No Greater Call* [1999], 160, 176): Այս ուղերձով կիսվելիս մտածեք, թե ինչպես կարող եք օգտագործել ուշադրություն գրավող որևէ վարժություն, ինչպես օրինակ՝նկար ցուցադրել կամ սուրբ գրությամբ կիսվել և խնդրել ընտանիքին մտածել այն մասին, թե ինչպես է այն վերաբերում ուղերձին:

2. «Ձեր ամենակարևոր նպատակներից մեկը պետք է լինի օգնելը ուրիշներին կիրառել ավետարանի սկզբունքները առօրյա իրավիճակներում: . . . Օգնեք սովորողներին գտնել այն օրհնությունները, որոնք գալիս են, երբ մենք ապրում ենք ավետարանով» (*Teaching, No Greater Call,* 159): Այս ուղերձով կիսվելուց հետո կարող եք հրավիրել ընտանիքի անդամներին կիսվել իրենց ունեցած փորձառություններով, որոնք կենտրոնացած են Փրկչի վրա Սուրբ Ծննդյան ժամանակ:

Երիտասարդներ

Միսիոներական Սուրբ Ծնունդ

Լորան Քուկ

Որպես լիաժամկետ միսիոներ իմ երկրորդ Սուրբ Ծննդյան ժամանակ իմ զուգընկերն ու ես այցելեցինք մի նոր մկրտված անդամի ու իր ընտանիքին: Սուրբ Ծննդյան հրաշալի ընթրիքից հետո մենք նրանց հետ կիսվեցինք Սուրբ Ծննդյան ուղերձով:

Մենք խնդրեցինք ընտանիքին այնպիսի բաներ նկարել, որոնք հիշեցնում են նրանց այս ժամանակաշրջանի մասին, ինչպես օրինակ՝ աստղեր, նվերներ, Սուրբ Ծննդյան երեկո և տոնածառներ պատկերող նկարներ: Այնուհետև մենք կարդացինք որոշ սուրբ գրություններ, ներառյալ 2 Նեփի 19.6. «Քանզի մեզ համար մի երեխա է ծնվել, մեզ մի որդի է տրվել. և իշխանությունը կլինի նրա ուսի վրա. և նրա անունը կկոչվի Սքանչելի, Խորհրդական, Հզոր Աստված, Հավիտենական Հայր, Խաղաղության Իշխան»: Մենք երգեցինք “Once in Royal David’s City” (*Hymns,* no. 205), Սուրբ Ծննդյան մասին ֆիլմ դիտեցինք և վկայություն բերեցինք Հիսուս Քրիստոսի մասին:

Դա մի Սուրբ Ծնունդ էր հասարակ պայմաններում, հեռու մեր ընտանիքներից ու սովորաբար նշվող Սուրբ Ծնունդներից, բայց մինչ մենք բերում էինք Փրկչի մասին մեր վկայությունները, ես զգացի այնպիսի խորը սեր ու երախտագիտություն Փրկչի ու Նրա ծննդյան համար, ինչպիսին ես նախկինում երբևիցե չէի զգացել: Ես գիտակցում էի, որ դա իմ վերջին Սուրբ Ծնունդն էր իմ Երկնային Հոր ծառայության մեջ որպես լիաժամկետ միսիոներ, բայց ես հասկացա, որ Նրա Հոգին կարող է վկայել ինձ Իր Որդու մասին, որտեղ էլ ես լինեի:

Երեխաներ

Նայել՝ Փրկչին տեսնելու համար

Նախագահ Ուխդորֆն ասել է, որ Սուրբ Ծնունդի ժամանակ մենք պետք է փնտրենք բաներ,

որոնք հիշեցնում են մեզ Փրկչի կյանքի մասին: Գտեք ստորև տրված սուրբ գրությունների հղումները՝ Նրա կյանքի որոշ կարևոր իրադարձությունների մասին սովորելու համար:

Մատթեոս Բ.1–2
Ղուկաս Բ.46
Մատթեոս ԺԵ.32–38
Ղուկաս Ը.49–55
Ղուկաս ԻԳ.33–34, 44–46
Հովհաննես Ի.11–20

© 2010 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Printed in USA: Անգլերենի հաստատումը. 6/09: Թարգմանության հաստատումը. 6/09: *First Presidency Message, December 2010* -ի թարգմանությունը: Armenian: 09372 201

Հավատք • Ընտանիք • Սփոփանք

Մեր պարտականությունն է՝ մասնակցել տաճարային և ընտանեկան պատմության աշխատանքին

Ուսումնասիրեք այս նյութը և, ինչպես հարմար է, քննարկեք այն քույրերի հետ, ում այցելում եք: Օգտագործեք հարցերը, որոնք կօգնեն ձեզ ամրացնել ձեր քույրերին և դարձնել Սփոփող Միությունը ձեր իսկ կյանքի ակտիվ մասը:

Դարեր շարունակ բազմաթիվ մարդիկ են մահացել առանց ավետարանի գիտելիքի: Այդ մարդկանցից ոմանք ձեր մտերիմ կամ հեռավոր բարեկամներն են: Նրանք սպասում են, որ դուք կատարեք անհրաժեշտ հետազոտություններ, որով իրար կմիացնեք ձեր ընտանիքները և նրանց փոխարեն կկատարեք փրկող արարողություններ:

Աշխարհի տաճարների մեծամասնությունը բավականաչափ զբաղված չեն: Տերը խոստացել է, որ ձեր սրտերը կդառնան դեպի հայրերը, որպեսզի երկիրն ամբողջովին չամայանա Նրա գալստյան ժամանակ (տես ՎԿՈՒ 2.2–3):

Դուք ստանում եք անձնական օրհնություններ որպես տաճարային և ընտանեկան պատմության աշխատանքին մասնակցելու արդյունք: Դրանցից մեկն այն ուրախությունն է, որը դուք զգում եք ձեր նախնիներին ծառայելիս: Մյուսն այն է, որ դուք կարողանում եք պատրաստվել տաճարային երաշխավորագրի համար, որը Տիրոջ առաջ ձեր արժանավորության նշան է: Նրանք, ովքեր այսօր արժանի չեն երաշխավորագիր ունենալու արտոնությանը պետք է աշխատեն եպիսկոպոսի կամ ճյուղի նախագահի հետ՝ որքան հնարավոր է շուտ դրան արժանանալու համար: Խնդրում եմ, մի եղեք առանց այս արժեքավոր որակավորման: Ես վկայում եմ, որ Քավությունը իրական է, և որ մեղքերը կարող են ներվել պատշաճ ապաշխարության արդյունքում:

Երբ մենք մասնակցում ենք տաճարային ու ընտանեկան պատմության աշխատանքին, մենք վստահ ենք, որ կունենանք Հոգին՝ մեր դժվարություններում մեզ մխիթարելու և կարևոր որոշումներում մեզ առաջնորդելու համար: Տաճարային և ընտանեկան պատմության աշխատանքը մեր իսկ նախնիներին սփոփանք կամ ծառայություն մատուցելու մեր աշխատանքի մի մասն է:

Ջուլի Բ. Բեք, Սփոփող Միության գերագույն նախագահ

Սուրբ գրություններից

Մաղաքիա Դ.5–6, Ա Կորնթացիս ԺԵ.29, 1 Պետրոս Գ.18–19, ՎԿՈՒ 110.13–16, 128.24

Մեր պատմությունից

Ջոզեֆ Սմիթ Մարգարեն ասել է, որ ամենամեծ պարտականությունը, որ Աստված այս աշխարհում դրել է մեզ վրա այն է, որ փնտրենք մեր մահացածներին (*տես History of the Church,* 6:313): Հենց ամենասկզբից Սփոփող Միության քույրերը աջակցել են այս մեծ աշխատանքին: 1842 թվականին Նավույում Սառա Մ. Քիմբալը, ցանկանալով օգնել տաճարը կառուցող բանվորներին, շտապ քույրերի խումբ կազմավորեց՝ օգնելու համար արդյունավետ ծառայել: Երբ նրանք սկսեցին հանդիպել, Մարգարեն . . . կազմավորեց առաջին Սփոփող Միությունը՝ քահանայության օրինակով: Այդ ժամանակվանից սկսած Սփոփող Միության քույրերը օգնում են շարունակել Նավու տաճարի աշխատանքները: . . .

«1855թ. Սրբերի առաջին անգամ Յուտա մտնելուց ութ տարի անց, հաստատվեց Օժտումների Տունը: Էլիզա Ռ. Սնոուն, ով առաջին Սփոփող Միության առաջին անդամներից էր և պահպանել էր այդ կազմակերպության արձանագրությունները, 1866 թ. Նախագահ Բրիգամ Յանգի կողմից կանչվեց լինելու Սփոփող Միության գերագույն նախագահը: Նա և մյուս քույրերը Օժտումների Տան հավատարիմ աշխատողներ էին: Այնուհետև, Մենթ Ջորջ, Լոգան և Մանթի տաճարների կառուցումից հետո, այս քույրերը ճամփորդում էին դեպի այդ տաճարներից յուրաքանչյուրը, որպեսզի այնտեղ աշխատանք կարողանային անել մահացածների համար»:[1]

Հղումներ

1. Mary Ellen Smoot, “Family History: A Work of Love,” *Ensign,* Mar. 1999, 15.

Ի՞նչ կարող եմ ես անել

1. Ինչպե՞ս կարող եմ օգնել իմ քույրերին փնտրել իրենց նախնիներին և նրանց համար տաճարային արարողություններ կատարել: Մտածեք յուրաքանչյուր քրոջ հանգամանքների մասին, մինչ խորհում եք, թե ինչպես կարող եք օգնել նրան: Դուք կնկատեք, որ ընտանեկան պատմության աշխատանքը հաճախ կարող է ամրացնել նոր, վերադարձող և ոչ-ակտիվ անդամներին:

2. Ե՞րբ է տաճարային և ընտանեկան պատմության աշխատանքը մխիթարել ինձ իմ դժվարին պահերին կամ առաջնորդել ինձ կարևոր որոշումներ կայացնելիս:

Լրացուցիչ տեղեկության համար այցելեք www.reliefsociety.lds.org:

© 2010 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Printed in USA. Անգլերենի հաստատումը. 6/09: Թարգմանության հաստատումը. 6/09: *Visiting Teaching Message, December 2010* -ի թարգմանությունը: Armenian: 09372 201